

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՅԱՆ

Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի ասպիրանտ

**ՔՍՂԱՔԱՅՈՒՆ ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ ԵՎ
ՔՍՂԱՔԱՅՈՒՆ ՍԱՀԱՅԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՀԵՏ
ԿԱՊՎԱԾ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ**

Սույն հոդվածում հեղինակը ուսումնասիրության է ենթարկել քաղաքացուն անհայտ բացակայող և քաղաքացուն մահացած հայտարարելու հիմքով հատուկ վարույթի կարգով հարուցված գործերի քննության խնդրում գոյություն ունեցող օրենսդրական բացթողումները, որոնք անդրադառնություն են կայացված վճիռների լրիվության և հիմնավորվածության վրա: Վերլուծության արդյունքում հոդվածագիրը եկել է եզրակացության, որ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսդրի 31-րդ գլուխն արմատական վերակառուցման կարիք ունի:

Հիմնարար բառեր՝ վարձակալած, անհայտ բացակայող, հասուկ վարույթ, իրավահարարերություն, գույք, ժառանգություն, օրենդիր, պատահար, զինծառայող, վճիռ:

Քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային և այլ իրավահարարերությունների մեջ գտնվող որևէ մեկի բնակության (հաշվառման) վայրն անհայտ լինելու դեպքում նրա հետ իրավահարարերության մեջ գտնվող մասնակիցները չեն կարող կամ կրթվարանան իրավանացնել իրենց սուբյեկտիվ իրավունքները: Քաղաքացուն հասուկ վարույթի կարգով անհայտ բացակայող ճանաչելը և նրան մահացած հայտարարելը դիմողի և այդ հանգամանքը հաստատելու մեջ շահագրգուված այլ անձանց համար առաջացնում են որոշակի իրավունքներ ու պարտականություններ: Օրենսդրության և դատական պրոկտիկայի վերլուծությունները վկայում են, որ նման գործերը հարուցվում են հետևյալ դեպքերում՝

1) անհայտ բացակայող ճանաչված քաղաքացու գույքը պահպանելու և կառավարելու համար գույքի նկատմամբ կառավարիչ նշանակելու,

2) այդ գույքից անհայտ բացակայողի խնամքի տակ եղած անձանց ապրուստի միջոց տալու,

3) վարձակալած կամ օգտագործման իրավունքի հատկացված բնակտարածության նկատմամբ անհայտ բացակայողի իրավունքը կորցրած ճանաչելու,

4) անհայտ բացակայողի հետ ամուսնալուծությունը ՔԿԱԳ մարմիններուն ձևակերպելու և այլ անձի հետ գրանցված ամուսնության մեջ մտնելու,

5) առանց անհայտ բացակայողի համաձայնության նրա երեխաներին որդեգրելու,

6) անհայտ բացակայողի մասնակցությամբ կնքված հանձնարարության պայմանագիրը կամ նրա կողմից տրված լիազորագրի գործողությունը դադարեցնելու,

7) անհայտ բացակայող ճանաչված և մահացած հայտարարված քաղաքացու ընտանիքի անդամներին կենսաբոշակ նշանակելու,

8) մահացած հայտարարված քաղաքացու

մահվան մասին ՔԿԱԳ մարմիններում գրանցում կատարելու,

9) մահացած հայտարարված քաղաքացու հետ ամուսնությունը դադարելու,

10) մահացած հայտարարված քաղաքացու գույքը ժառանգելու նպատակով (Քաղ. օր. թիվ 45, 324, 788, 1188, Ընտ. օր. 15, 118, ՔԴՕ թիվ 181, Պետական կենսաբոշակների մասին օր. 13-րդ հոդվածներ):

Քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դիմումը արդյունքում է նրա վերջին հայտնի բնակության (հաշվառման) վայրի կամ դիմումի բնակության վայրի ընդհանուր իրավասության դատարան: Օրենսդիրը կոնկրետ պահանջներ է ներկայացնում, որոնք պետք է նշված լինեն դիմումում:

Դրանք են՝

1) քաղաքացուն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու դեպքում դիմուղի համար ակնկալվող իրավական հետևանքները,

2) քաղաքացու անհայտ բացակայությունը հավաստող հանգամանքները,

3) անհայտ բացակայողին նահ սպառնացող կամ այլ հանգամանքներ, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ նրա մահը որոշակի դժբախտ պատահարի հետևանք է:

Օրենսդիրը դատարանին իրավասություն է տվել նշված պահանջները չկատարելու դեպքում վերադարձնել դիմումը:

Քաղաքացուն անհայտ ճանաչելու և նրան մահացած հայտարարելու պայմանները նախատեսված են Քաղ. օր. 44-րդ և 47-րդ հոդվածներով: Շահագրգուված անձանց դիմումով դատարանը կարող է քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչել, եթե մեկ տարվա ընթացքում նրա բնակության վայրում տեղեկություններ չկան նրա գտնվելու տեղի մասին: Քաղաքացին կարող է մահացած հայտա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րարվել, եթե նրա բնակության վայրում երեք տար-
վա ընթացքում տեղեկություններ չկան նրա գտնվե-
լու վայրի մասին, իսկ եթե նա անհայտ կորել է այն-
պիսի հանգամանքներում, որոնք մահվան վտանգ
են սպառնացել կամ իիմք են տալիս ենթադրելու
նրա մահը որոշակի դժբախտ դեպքի հետևանքով
վեց ամսվա ընթացքում։ Ռազմական գործողու-
թյունների հետևանքով անհայտ կորած զինծառա-
յողը կամ այլ քաղաքացին կարող է մահացած հայ-
տարարվել ոչ շուտ, քան ռազմական գործողու-
թյունների ավարտից երկու տարի հետո։

Դիմումն ընդունելուց հետո պետք է դիմողից
ապացույցներ պահանջել նաև անհայտ բացակա-
յողի հետ քաղաքացիական, ընտանեկան, աշխա-
տանքային և այլ իրավահարաբերությունների մեջ
գտնվելու, ինչպես նաև քաղաքացու անհայտ բա-
ցակայության հետևանքով իր սուրբեկալի իրա-
վունքների իրականացումը կամ պաշտպանու-
թյունն իրազործելու անհնարինության մասին։

Վերը նշվածները հնարավորություն են տալիս
կանխել իրավաբանական նշանակություն չունե-
ցող փաստերի վերաբերյալ դիմումների ընդունու-
մը։ Այսպես քաղաքացու գույքը ժառանգելու նպա-
տակով մեկ ուրիշին անհայտ բացակայող ճանա-
շելու մասին դիմումը վարույթ ընդունվել չի կարող,
քանի որ անհայտ բացակայության վերաբերյալ
վճիռն այս դեպքում իրավական հետևանքներ չի
առաջացնում։ Նույն կերպ չպետք է վարույթ ընդու-
նել քաղաքացուն մահացած հայտարարելու վերա-
բերյալ անհայտ բացակայող քաղաքացու ընտա-
նիքի անդամների թվի մեջ չմտնող անձանց դիմու-
ները, եթե դրանք տրվում են կերակրողին կորցնելու
կապակցությամբ կենսաբոշակ ստանալու նպա-
տակով։ Սակայն դատավորն իրավունք չունի մեր-
ժել դիմումի ընդունումն այն պատճառաբանու-
թյամբ, թե դիմուր ապացույցներ չի ներկայացրել
անհայտ բացակայողի վերջին բնակության վայրի
մասին, կամ որ դիմումում նշված անհայտ բացա-
կայության ժամկետները պակաս են Քաղ. օր. 44-
րդ և 47-րդ հոդվածներով նախատեսված ժամկետ-
ներից՝ մեկ տարուց և երեք տարուց։ Այս հանգա-
մանքները կարող են վիճելի լինել, ուստի կարող են
պարզել միայն գործի քննության ժամանակ։

Դիմումը վարույթ ընդունելուց հետո դատավո-
րը գործը դատական քննության նախապատրա-
սելու նպատակով նախանառաջ պարզում է, թե ով-
քեր (բացակայողի մերձավոր ազգականները, նրա
հետ աշխատողները և այլն) կարող են տեղեկու-
թյուններ տալ բացակայողի մասին։ Դատավորը
այդ նպատակով հարցում է անում բացակայողի
վերջին հայտնի բնակության վայրի և աշխատա-
վայրի կազմակերպություններին, ինչպես նաև
որոշում է կայացնում դիմողի հաշվին հաղորդա-
բություն իրապարակել մանուլում քաղաքացուն
անհայտ բացակայող ճանաշելու կամ մահացած

հայտարարելու գործի հարուցման մասին։ Եթե դի-
մումը տրվել է ռազմական գործողությունների կա-
պակցությամբ անհայտ կորած զինծառայողին մա-
հացած հայտարարելու մասին, ապա համատիրու-
թյունից, ուստիկանության մարմիններից, տեղա-
կան ինքնակառավարման մարմիններից բացի
պետք է հարցում ուղարկել նաև ՀՀ պաշտպանու-
թյան նախարարություն կամ նրա տեղական մար-
միններ։ Բացակայողին չհայտնաբերելու կապակ-
ցությամբ նրա նկատմամբ հետախուզումը դադա-
րեցնելու մասին ուստիկանության մարմինների տե-
ղեկանքները դատարանների կողմից չեն կարող
դիտվել որպես այդ անձի բնակության վայրի վերա-
բերյալ տեղեկություններ ստանալու անհնարինու-
թյունը հաստատող արժանահավատ ապացույց-
ներ։ Գործի հանգամանքները բազմակողմանիո-
րեն և օբյեկտիվ կերպով պարզելու նպատակով
նման տեղեկանքները ստանալուց հետո էլ դատա-
րանները պետք է հարցումներ ուղարկեն համապա-
տասխան անձանց ու կազմակերպություններին։

Դիմումն ընդունելուց հետո դատավորը կարող է առաջարկել խնամակալության և հոգաբարձու-
թյան մարմնին՝ խնամակալ նշանակել բացակայող
քաղաքացու գույքի պահպանության և կառավար-
ման համար։

Գործը դատական քննության նախապատ-
րաստելու նպատակով մամուլում իրավաբակված
հաղորդագրության մեջ դատարանը խնդրում է բո-
լոր քաղաքացիներին և կազմակերպություններին
դատարանին հաղորդել այդ անձի մասին իրենց
հայտնի բոլոր տեղեկությունները։

Այնուհետև դատավորը լուծում է շահագրգո-
ված անձանց՝ գործի քննությանը ներգրավելու
հարցը։ Ելեկով դիմողի նպատակից՝ գործին մաս-
նակից են դարձվում սոցապ մարմիններն ու դիմուրի
ընտանիքի անդամները, որոնք իրավունք ունեն
մահացած հայտարարված քաղաքացու գծով կեն-
սաբոշակ ստանալ կերակրողին կորցնելու կա-
պակցությամբ, դիմուրի ժառանգները կամ ֆինան-
սական մարմինները, անհայտ բացակայողի ժա-
ռանգները, նրանցից ապրուսի միջոց ստանալու
իրավունք ունեցող անձինք և այլն։

Նախապատրաստումն ավարտելուց հետո
գործը նշանակվում է դատական քննության, որին
իրավիրվում են դիմուրը և շահագրգոված քաղաքա-
ցիների ու կազմակերպությունների ներկայացու-
ցիները։ Գործի ըստ էության քննության ընթաց-
քում դատարանը պարզում է անհայտ բացակայու-
թյան փաստական հանգամանքը և բավարարում
կամ մերժում է դիմուրի պահպանը։ Անհայտ բացա-
կայության սկիզբը կամ քաղաքացու մահվան օրը
որոշվում է Քաղ. օր. 44-րդ հոդվածի 2-րդ և 47-րդ
հոդվածի 3-րդ մասերի հիման վրա։ Այն է՝ անհայտ
բացակայության մելքտարյա ժամկետն սկսում է
աշխատել բացակայողի մասին վերջին տեղեկու-

թյունների ստացման օրից, իսկ երե դա հնարավոր չէ որոշել, ապա այն ամսին հաջորդող ամսվա մեկից, եթե ստացված են եղել բացակայողի մասին վերջին տեղեկությունները, երե հնարավոր չէ որոշել նաև այդ ամսիը, ապա՝ հաջորդ տարվա հունվարի մեկից:

Մահը մի իրադարձություն է, որի հետ նյութական իրավունքի նորմերը կապվում են իրավական հետևանքների հետ: Այդ փաստով են պայմանաւորված մասնավորապես կենսաթոշակային, ժառանգական իրավահարաբերությունների ծագումը, փոփոխությունը և անունարնտանեկան իրավահարաբերությունների դադարումը:

Անձի՝ որոշակի ժամանակում և որոշակի հանգամանքներում մահանալու փաստի հաստատման անհրաժեշտություն առաջանում է, եթե մահը ընդհանրապես չի գրանցվել զազսի մարմիններում: Ընդունին, եթե շահագրգորված անձն իր տրամադրության տակ ունի անձի մահվան փաստը հաստատող ապացույցներ (իրավասու մարմինների կողմից տրված տեղեկանքներ), ապա նա մահվան գրանցման խնդրով առաջին հերթին պետք է դիմի զազսի համապատասխան մարմինն, որը փաստի առկայությունը ստուգելուց և դրա առկայության մեջ համոզվելուց հետո պարտավոր է գրանցել այն ու տալ մահվան վկայական, իսկ եթե շահագրգորված անձը չունի այդպիսի ապացույցներ, կամ ներկայացված ապացույցները զազսի մարմինների մոտ կասկածներ են հարուցում, և վերջինս մերժում է մահվան գրանցումը, ապա նա կարող է դիմել դատարան անձի՝ որոշակի ժամանակում և որոշակի հանգամանքներում մահանալու փաստի հաստատման խնդրով՝ դիմումին կցելով զազսի մարմինների մերժումը հաստատող փաստաթրեր:

Քաղաքացուն մահացած հայտարարելու պարտադիր նախադրյալը որոշակի ժամանակով անհայտ բացակայությունն է, իսկ անձի որոշակի ժամանակում և որոշակի հանգամանքներում մահանալու փաստի հաստատման համար բավական է միայն, որ փաստը հաստատող ապացույցներ լինեն, և մահը ճևակերպված լինի զազսի մարմիններում: Թվարկված նյութական տարրերությունները հանդիսանում են երկու տարրեր կատեգորիայի գործերի դատավարական առանձնահատկությունների հիմք, այն է՝ քաղաքացուն մեռած հայտարարելու վերաբերյալ գործերի վարույթը իրավաբանական փաստերի հաստատման վերաբերյալ գործերի վարույթին չի պատկանում (առաջին դեպքում հայտարարություն է տրվում գործ հարուցելու մասին, պարտադիր կարգով մասնակցում է դատախազ և այլն): Բացի այդ, եթե քաղաքացուն մահացած հայտարարելը տեղի է ունենում միայն դատական կարգով, ապա անձի՝ որոշակի ժամանակում և որոշակի հանգամանքներում մահանալու փաստը կարող է հաստատվել նաև վարչական կարգով:

Երբեմն էլ դատարանները անձի՝ որոշակի ժամանակում և որոշակի հանգամանքներում մահանալու փաստի հաստատման վերաբերյալ գործերով կայացված վճիռներում չեն նշում փաստական մահվան ժամանակը: Նման վճիռները զազսի մարմինների կողմից կատարվող գրանցումների համար հիմք հանդիսանալ չեն կարող:

Քննարկվող փաստը պետք է տարրերել նաև մահվան գրանցման փաստից: Երկու դեպքերում էլ առկա են մահը հաստատող որոշակի ապացույցները, սակայն առաջին դեպքում խոսքը վերաբերում է նախկինում չձևակերպված, իսկ երկրորդ դեպքում՝ համապատասխան մարմիններում պատշաճ կարգով ձևակերպված մահվան փաստին: Այսպես է պատերազմական պայմաններում. հնարավոր չէ ուղղամաշտում զրիված անձանց մահը գրանցել զազսի մարմիններում, և գրանցմանը փոխարինում է զինվորական մասի հաղորդումը, որը հետագայում կարող է կորչել կամ ոչնչանալ: Նման պարագայում դատարանը կարող է հաստատել անձի՝ որոշակի ժամանակում և որոշակի հանգամանքներում մահանալու և ոչ թե մահվան գրանցման փաստը, քանի որ այս դեպքում խոսքը վերաբերում է զազսի մարմիններում պատշաճ կարգով ձևակերպված մահվանը:

Քաղաքացուն մահացած հայտարարելու համար անհայտ բացակայության եռամյա ժամկետն սկսում է աշխատել և հաշվել այնպես, ինչպես որ քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու ժամկետը: Դատարանը կարող է անձին մահացած հայտարարել, եթե գործը դատարանում քննելուն նախորդող երեք տարիների ընթացքում բացակայողի գտնվելու վայրի մասին որևէ տեղեկություն չի ստացվել: Եթե քաղաքացին մշտական բնակության (հաշվառման) վայրից բացակայել է երեք տարուց ավելի, բայց տեղեկություններ կան այդ ժամկետում այլ տեղերում նրա գտնվելու մասին, ապա թեկուզ քաղաքացու այժմյան գտնվելու տեղն անհայտ է, դատարանը չի կարող նրան մահացած հայտարարել: Ուազմական գործողությունների ավարտման օրը պետք է հաստատված լինի զինմարմինների կողմից տրված տեղեկանքներով: Դիմողի պահանջը մերժվում է, եթե պարզվում է, որ անհայտ բացակայության ժամկետը պակաս է օրենքով նախատեսված ժամանակահատվածից:

Գործի քննության ընթացքում դատարանը լսում է դիմոնի և շահագրգորված անձանց բացարությունները, հարցաքննում է վկաներ, հետազոտում է ներկայացված փաստաթրերը: Եթե դատական բնակության ընթացքում պարզվում է անհայտ բացակայողի բնակության (հաշվառման) վայրը, ապա դատարանը դիմողին առաջարկում է հրաժարվել իր պահանջից և նրա համաձայնությամբ գործի վարույթը կարծում է ՔԴՕ 109-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան: Իսկ եթե

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դիմողը չի հրաժարվում իր պահանջից, դատարանը գործ քննում է ըստ էության և մերժում է նրա դիմումը:

Գործի քննությունն ավարտվում է վճռի կայացմամբ: Վճռի եզրափակիչ մասում դատարանը նշում է քաղաքացու ազգանունը, անունը, հայրանունը, վերջին հայտնի քննակության վայրը, անհայտ բացակայության սկզբնաժամկետը կամ քաղաքացու մահվան ժամանակը, եթե դա հայտնի է դատարանին:

Դատարանի վճռողը, որով քաղաքացին անհայտ բացակայող է ճանաչվել, հիմք է հանդիսանում, որ բացակայողի գույքի գտնվելու վայրի խնամակալության և հոգարարձության մարմինն այդ գույքի նկատմամբ խնամակալություն սահմանի, եթե մինչ այդ նա չի արել այդ:

Դատարանի վճռողը, որով քաղաքացին մահացած է հայտարարվել, հիմք է հանդիսանում, որ ՔԿԱԳ մարմինն այդ քաղաքացու մահվան մասին գրանցամատյանում գրառում կատարի:

Օրենքի տեքստը ճշգրտելու և դատական սխալներից խուսափելու համար անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը. քաղաքացուն մահացած հայտարարելու հիմքերը կարգավորվում են նյութական իրավունքի նորմերով (Քաղ. օր. 44-րդ հոդվ.), իսկ քաղաքացու՝ որոշակի ժամանակում և որոշակի հանգամանքներում մահանալու և մահվան գրանցման փաստը հաստատելու հիմքերը՝ դատավարության իրավունքի նորմերով (ՔԴՕ 189-րդ հոդվ. 2-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետեր): Քաղաքացուն մահացած հայտարարելու գործերով դատարանը պարզում է անհայտ բացակայության ժամկետները կամ այն հանգամանքները, որոնք անհայտ բացակայողի մահվան վտանգ են սպառնացել, կամ հիմք են տվել ենթադրելու որոշակի ժամանակում նրա մահը: Քաղաքացու՝ որոշակի ժամանակում և որոշակի հանգամանքներում մահանալու կամ նրա մահվան գրանցման փաստը հաստատելու հավաստելու գործերով դատարանը պարզում է անձի մահանալու հավաստի կամ քաղաքացու մահը ժամանակին պատշաճ կարգով գրանցված լինելու հանգամանքները: Հետևյալը, առաջին դեպքում քաղաքացու մահը սուսկ ենթադրվում է, իսկ երկրորդ դեպքում հաստատվում է ստույգ կերպով: Քաղաքացուն մահացած հայտարարելու դեպքում անձի մահվան օր է համարվում դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելու կամ քաղաքացու ենթադրյալ մահվան օրը (եթե այդպես է նշվել վճռում): Ի դեպք, օրենսդիրը չի սահմանել նշված դեպքերը, որ դարձյալ հատուկ վարույթի տարբեր ինստիտուտները միմյանց հետ շփոթելու արդյունք է: Անձի՝ որոշակի ժամանակում և որոշակի հանգամանքներում մահանալու փաստի հաստատման դեպքում անձի մահվան օր է համարվում դատարանի կողմից հաստատված փաստական

մահվան օրը: Բացի այդ, քաղաքացուն մահացած հայտարարելը կարող է տեղի ունենալ միայն դատական կարգով, իսկ քաղաքացու՝ որոշակի ժամանակում և որոշակի հանգամանքներում մահանալու փաստը՝ նաև փարչական կարգով՝ ՔԿԱԳ մարմինների կողմից: Քաղաքացուն մահացած հայտարարելու գործով օրինական ուժի մեջ մտած վճռող կարող է վերացվել հենց իր՝ վճռող կայացնող դատարանի կողմից, եթե այդ քաղաքացին ներկայանում է, իսկ անձի՝ որոշակի ժամանակում և որոշակի հանգամանքներում մահանալու փաստի հաստատման վերաբերյալ վճռող՝ միայն վերաբնության կարգով՝ նոր երևան եկած հանգամանքների հետևանքով և այլն:

Հետևյալը՝ ՔԴՕ 31-րդ գլուխն արմատական վերակառուցման կարիք ունի:

Անհայտ բացակայող ճանաչված կամ մահացած հայտարարված քաղաքացու ներկայանալու կամ նրա գտնվելու վայրը հայտնի դառնալու դեպքում դատարանն այդ քաղաքացու կամ նրան անհայտ բացակայող ճանաչվելու (մահացած հայտարարելու) մասին իրեն դիմած անձանց միջնորդությամբ վերացնում է օրինական ուժի մեջ մտած իր նախկին վճռողը: Այդ հարցը դատարանը լուծում է առանց նոր վարույթ հարուցելու: Նախկին վճռողը վերացնելուց հետո վերականգնվում է քաղաքացու նախկին իրավական վիճակը՝ այստեղից բխող բոլոր իրավական հետևանքներով: Այն է՝ վերացվում է քաղաքացու գույքի նկատմամբ սահմանված խնամակալությունը, չեղյալ է համարվում նրա մահվան վերաբերյալ ՔԿԱԳ մարմիններում կատարված գրառումը, դադարեցվում է նրա ընտանիքի անաշխատունակ անդամներին վճարվող կենսաբռնակը և վերականգնվում է դադարած ամուսնությունը, իհարկե, եթե նրա ամուսինը մինչ այդ նոր ամուսնության մեջ չի մտել:

Օրենսդիրը քննարկվող հարցում նույնակես բացքողում է արել՝ նշելով որ նախկինում կայացված վճռող կարող է վերացվել անհայտ բացակայող ճանաչված կամ մահացած հայտարարված քաղաքացու դիմունով միայն նրա ներկայանալուց հետո: Հասկանալի չէ, թե ինչ պետք է անեն այդ հարցում շահագրգուված մյուս անձինք, եթե նա չի ներկայանում կամ հրաժարվում է դիմում տալուց:

Օգտագործված գրականության ցանկ

1. Попова Ю.А. Признание граждан безвестно отсутствующими. М., 1985.
2. Պետրոսյան Ռ.Գ., նշվ. աշխ., էջ 467.
3. Богомолов И.В. Некоторые проблемы подготовки гражданских дел к судебному разбирательству // Вестник СГАП. 2002, N2, С. 18-19.
3. Золотухин А.Д. Проблемы судопроизводства по делам об установлении фактов имеющих юридическое значение в особом производстве. Автореф. дис... канд. юрид. наук. М., 2010, С. 15-16.
5. Պետրոսյան Ռ.Գ., նշվ. աշխ., էջ 471.
6. Պետրոսյան Ռ.Գ., նշվ. աշխ., էջ 472:

Вардан Варданян

Аспирант Европейской региональной академии

РЕЗЮМЕ

*Некоторые проблемы, связанные с признанием гражданина без вести отсутствующим
и признанием гражданина умершим*

В данной статье автор изучил законодательные упущения, имеющиеся в проблеме рассмотрения дел, которые были возбуждены в порядке особого производства на основании признания гражданина без вести отсутствующим и признания гражданина умершим, которые отражаются на целостность и обоснованность вынесенных приговоров. В результате анализа автор статьи пришел к заключению, что глава 31 Гражданского Процессуального Кодекса РА подлежит радикальной реконструкции.

Ключевые слова: арендованный, безвестно отсутствующий, особое разбирательство, правоотношение, имущество, наследство, законодательный, происшествие, военнослужащий, решение.

Vardan Vardanyan

European Regional Academy
PhD student

SUMMARY

Some problems connected with acknowledgment of a citizen missing or dead

In this article the author studied legislative omissions available in the problem of examination of cases being instituted by the order of special proceedings based on acknowledgment of a citizen missing or dead, which are reflected on completeness and reasonableness of the made decisions. In the result the article's author concluded that the chapter 31 of the Civil Procedure Code of RA is subject to radical reconstruction.

Keywords: rented, missing, special trial, legal relationship, asset, heritage, legislative, mishap, soldier, solutions.